

# Արցախի Հայութեան Երկիւղալից Կոչը

Ժամանակի թաւալքին հետ բարդացաւ Արցախի լուծման հարցը, իսկ խորհրդային Միութեան ներքին խռովութիւններուն մակընթացութեան համապատասխան վտանգաւոր դարձաւ ինքնավար Մարզին հայ բնակչութեան առօրեայ կեանքը եւ անոր ֆիզիքական ապահովութիւնը: Դժուար չեղաւ անկէ անդին արցախեան տազնապին օղակաձեւ ալիքաւորումը, որ վերջին շաբաթներուն տարածուեցաւ եւ ընդգրկեց ամբողջ Հայաստանի եւ Ատրպէյճանի տարածքը: Այնքան, որ Հայաստանի թիւ մէկ ղեկավարը՝ Սուրէն Յարութիւնեան 29 Օգոստոսին Երեւանի հեռատեսիլէն ստիպողական գտաւ ահազանգ մը հնչեցնել. «Իրադրութիւնը շիկացած է... դարձած է օրհասական... երկու ժողովուրդները կանգնած են առեակատման, ազգամիջ-եան պատերազմի սեմին»:

Ազերիները սկսած էին իրենց հասկցած ձեւով ջանալ լուծել Արցախի հարցը: Մարզը կը մնար չըջապատուած. հայ անհատներու, տուններու եւ գիւղերու վրայ յարձակում, թալան, սպանութիւն եւ հոգեբանական մնայուն ճնշում առօրեայ ընթացիկ դէպքեր դարձան: Ազերիներ նոյնիսկ Հայաստանի սահմանէն ներս մտան արջառ գողնալու եւ հովիւ սպանելու դիտումով: Պաքուի ազերի մտաւորականութիւնը, մոռնալով իր դերը եւ ասպարէզը, վերածուեցաւ հայերու դէմ զրպարտչական մեքենայի մը, որ «մի անգամ ընդմիշտ» աղաղակելէ ետք թէ «Ղարաբաղը ատրպէյճանական հող է եւ ոչ ոքի անկէ թիզ մը հող պիտի տանք», զօրակոչ կ'ընէր, որ ազերիները միացնեն իրենց «բարոյական, քաղաքական եւ ֆիզիքական ուժերը» քայքայելու համար «սեւ ուժերը» (իմա՝ հայերը — ի՞նչ), հետեւաբար անհրաժեշտ էր որ «ստեղծուի կոմիտէ մը Ղարաբաղի օգնութեան»:

Ազերի «մտաւորականութեան» պակաս ձգածը պիտի զգային ազերի «ակադեմիական պատմագէտ» մը՝ Զիա Պուներթով, որ գրեթէ ձեւով յարձակում գործեց Ամենայն Հայոց կաթողիկոսի անձին դէմ Ակադեմիայի պաշտօնաթերթին իսկ միւսնակներէն:

«Մտաւորականներ», յանուն անվաւեր «ժողովրդային ճակատ» կազմակերպութեան մը ոտքի հանեցին նաեւ ազերի ամբողջը, որ Պաքուի կեդրոնական հրապարակին վրայ անարգել հաւաք կազմակերպելով, պահանջեց որ Արցախ վերադառնար Պաքուի գերիշխանութեան ներքեւ: «Ճակատ»ը իշխանութիւններէն այժմ խոստում առած է որ պիտի օրինականանայ իր գոյավիճակը, ու մանաւանդ՝ Մոսկուայի մէջ Սեպտեմբեր 25-ին ծրագրուած խորհրդային խորհրդարանին մէջ ան պիտի արծարծէ Արցախին վրայ Պաքուի իշխանութեան վերահաստատման հարցը: Միւս կողմէ «ժողովրդային ճակատ»ը ազերի գինեալ երիտասարդներ կը զրկէ Արցախ: Թրքական «Կիւնայտըն» թերթի թղթակիցը անցեալ շաբաթ Պաքուէն վերադարձին կը գրէր, որ «Ազգային ճակատ»ը զօրակոչի կ'ենթարկէ երիտասարդութիւնը՝ կազմելու համար բանակ մը, որուն «մէկ մասը արդէն իսկ սկսած է դրկուիլ լեռնային Ղարաբաղ»: Թըղթակիցը կ'աւելցնէր որ վերամուտին պատճառով երիտասարդները որոնք Պաքու եկան, «գրնուելէ ետք Ղարաբաղ գացին»:

Այս ամբողջ ծայր աստիճան վտանգաւոր իրադրութեան դիմաց Մոսկուա երկու դիրք բռնեց. ներքին նախարարութեան ենթակայ մասնաւոր ուժերու թիւը աւելցուց Արցախի մէջ, առանց երբեք ամբողջովին կարենալու կամ ուզելու առաջը առնել ազերի խռովարարներու եղեռնագործութիւններուն, ոչ ալ ապահովելու Հայաստան-Արցախ ճանապարհին երկայնքին մարդոց եւ ապրանքներու անվտանգ անցքը. միւս կողմէ, Մոսկուա պահեց կատարեալ լուրջութիւն մը, պայթուցիկ կացութեան մը դիմաց: Լուրջութիւն մը, որուն ամենէն պերճախօս օրինակն էր երկրին թիւ մէկ ղեկավարին անբարբառ դիրքը հարցի մը հանդէպ, որ ան կը յայտարարէր — էր ժամանակին — թէ ծնունդն է անիրաւութիւններու կուտակումին:

Կարելի է անգամ մը եւս ենթադրել Արցախի հարցին հանգոյցի մը վերածուելուն պատճառի ետին թագնուած Մոսկուայի մեղսակցութիւնը, որուն մէկ դրուագը կարելի է նկատել Զօրի Բալայեանի «Խորհրդային Հայաստան»ի Օգոստոս 8-ի համարին մէջ լոյս տեսած երկար գրութիւնը, ուր ան կը պատկերէ Գերագոյն Խորհուրդի ժողովասրահը: Նախագահութիւնը դասական հնարքի կը դիմէ — ձգձգել, խոստանալ, յետաձգել —

որպէսզի Արցախի դժնդակ կացութիւնը պատկերող իր ելոյթը տեղի չունենայ:

Ահա այս ճգնաժամային՝ լինել-չլինելու վտանգին առջեւ է, որ Արցախի Ազգային Խորհուրդի նախագահութիւնը Սեպտեմբեր 4ին որոշեց դիմել ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին միջազգային գինեալ ուժեր պահանջելով իր փրկութեան համար: ՄԱԿի դիմումը կատարուած է Մոսկուա ուղղուած բազմաթիւ թախանձագին պահանջներէ ետք, երբ տեսնուած է որ «երկրի ղեկավարութիւնը շրջանի բնակչութեան անվտանգութիւնը երաշխաւորող միջոցների չի ձեռնարկում», մինչ կը «հնչեն սոււկայիթեան ցեղասպանութիւնը կրկնելու կոչեր, որոնք պաշտպանութիւն են գտնում Ատրպէյճանական Հանրապետութեան պաշտօնական շրջանների կողմից»:

ՄԱԿի Ապահովութեան «ուժը» ծանօթ է բոլորիս: Բացի Արցախի ճգնաժամային կացութիւնը միջազգային կազմակերպութեան տոմարներուն մէջ արձանագրած ըլլալու ընծայած բաւարարութենէն, Ապահովութեան Խորհուրդը գործնական գետնի վրայ բացարձակապէս ոչինչ պիտի ընէ կամ կրնայ ընել փրկելու համար վտանգուած բնակչութեան կեանքը: Արցախցիները նոյնքան հաւատքով կրնային դիմել Աստուծոյ կամ Սատանային, եւ ակնկալել նուազագոյն արդիւնք մը: Այսուհանդերձ, ՄԱԿի դիմումը պիտի ունենայ պատմական իմաստ մը այն դժբախտ իրողութեամբ, որ ամենագոր խորհրդային Միութեան մաս կազմող աննշան տարածքին վրայ ապրող հնամեայ ազգի մը պատկանող բնակչութիւնը զրկուած է ֆիզիքական անհրաժեշտ ապահովութենէ:

Երկրաշարժէն արիւնաքամ եղած եւ Արցախի պաշարումով տկարացած հայերը անկար դրութեան մատնելէ ետք է, որ Մոսկուա որոշեց իր մօտ կանչել երկու հանրապետութիւններու ղեկավարները, որ «փոխզիջումներով» լեզու գտնեն: Այս բառը յստակ նշանակութեամբ կը հնչէ Ս. Յարութիւնեանի «Արմէնփրէս»ին տուած հարցազրոյցին մէջ: Հայաստանի ղեկավարութիւնը սկզբունքով ոչինչ զիջած է Արցախի հարցին ծանօթ լուծումին իր արդար պահանջէն, այսուհանդերձ, արդարութիւն, իրաւունք եւ «ղեմոկրատական սկզբունքները դժուարութեամբ են իրենց համար ուղի հարթում»: Ուստի, կը տրամաբանէ Յարութիւնեան, ըլլանք «իրատես որքան ալ դա դժուար լինի, փնտռենք փոխզիջողական ուղի»:

Այնպէս կը թուի, թէ Երեւան այժմ պիտ գոհանայ եթէ Արցախին մէջ վերականգնին տեղական իշխանութիւններու իրաւասութիւնները եւ Մարզը իսկապէս ենթակայ ըլլայ ուղղակի եւ միայն Մոսկուայի: Հայաստանի հետ միացման հարցը այժմ պէտք է հանգիստ ձգել իրաւունքներու թղթածրարին մէջ:

Պաքու հաւանաբար ընդդիմանայ նոյնիսկ նման որոշումի մը, երբ ուժին նժարը Մոսկուայի մանուածոյ քաղաքականութեան հետեւանքով հիմա իր կողմը թեքած է: Նկատի առնելով նաեւ այն իրողութիւնը, որ ի հարկին Գրեմլին Պաքուի դեռ կրնայ պարտադրել ծանօթ «փոխզիջողական» լուծումը, Ատրպէյճանի Գերագոյն Խորհուրդը 19 Սեպտեմբերի իր նիստին պիտի քննէ Մոսկուայի որոշումներուն «վեթօ» դնելու իրաւունքի հարցը:

Նման «իրաւունք»ի մը վաւերացման պարագային, Արցախի հարցին «կէս լուծում»ն իսկ դէմ յանդիման պիտի գտնուի նոր անելի մը:

Մոսկուա միշտ մէկ լուծում ետ կը մնայ ժամանակի հարցով: Յառաջիկայ շաբաթները պիտի տան նաեւ այս հարցին պատասխանը:

**BAIKAR ARMENIAN WEEKLY**  
 ISSN 0741-8396  
 An A.D.L. Publication  
**ՊԱՅՔԱՐ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
 Պաշտօնաթերթ Ռամկավար Ազատական Կուսակցութեան  
 Ամերիկայի Արեւելեան Շրջանակի  
 Published weekly except two weeks in July by:  
**Baikar Association, Inc.**  
 468 Mount Auburn Street, P.O.Box 302, Watertown, MA 02172  
 Telephone: (617) 924-4420  
 Telex (TLXI): 928436 (BAIKAR/MIRROR) • FAX (617) 924-3860  
 Editor: **KRIKOR KEUSSEYAN**  
 Subscription Rate: \$50 per year  
 Advertising: \$5.00 per column inch  
 Second Class Postage paid at Boston, MA  
**POSTMASTER:** Send address changes to **Baikar Armenian Weekly**,  
 P.O.Box 302, Watertown, MA 02172